Հաստատված է՝
Տնօրինության 10.02.2026թ.-ի
Թիվ DEC 12-12 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 12.02.2026թ.-ից:

Առաջնային շուկայից ավտոմեքենայի ձեռքբերման վարկերի տեղեկատվական ամփոփագիր

Վարկի նպատակը		Առաջնային շուկայից անհատական օգտագործման և/կամ տաքսի ծառայության մատուցման* նպատակով ավտոմեքենայի ձեռքբերում
Վարկառուի/Գրավատուի (համավարկառու/երաշխավոր)		18-65 տարեկան ռեզիդենտ ֆիզիկական անձինք*
Վարկի արժույթ		ՀՀ դրամ
Վարկի նվազագույն ժամկետ		12 ամիս
Վարկի առավելագույն ժամկետ	Տաքսի ծառայության մատուցման դեպքում	48 ամիս
	Անհատական օգտագործման դեպքում	84 ամիս
Նվազագույն կանխավճար		10%
Տարեկան անվանական տոկոսադրույք ներառյալ ԿԱՍԿՈ ապահովագրությունը	Տաքսի ծառայության մատուցման դեպքում	16% (հաստատուն)
	Անհատական օգտագործման դեպքում	13.9% (ճշգրտվող)
Տարեկան փաստացի տոկոսադրույք		15.8%--17.29%
Վարկի նվազագույն գումար		2,000,000 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումար		30,000,000 ՀՀ դրամ
Գրավի առարկա		Ձեռք բերվող ավտոմեքենա
Եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ կամ OTI)		ԸՊԵ≤ 60%
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն		90%
Գրավադրվող գույքի ապահովագրություն (ԿԱՍԿՈ)		Գրավադրվող ավտոմեքենայի ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում Բանկի կողմից վարկի մնացորդի չափով
Եկամուտների չհիմնավորման հնարավորություն		Անհատական օգտագործման դեպքում. 50% և ավել կանխավճարի դեպքում կամ 30%, եթե մեքենայի առուվաճառքի արժեքը 10,000,000 ՀՀ դրամ և ավելի է, եկամուտների հիմնավորում կարող է չպահանջվել, ինչպես նաև վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 14.5%

Հաստատված է՝
Տնօրինության 10.02.2026թ.-ի
Թիվ DEC 12-12 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 12.02.2026թ.-ից:

	Տաքսի ծառայության մատուցման դեպքում 50% և ավել կանխավճարի դեպքում եկամուտների հիմնավորում կարող է չպահանջվել, ինչպես նաև վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 17%
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ միանվագ
Մարման եղանակ	Անուիտետային/Դիֆերենցված *Մայր գումարի և տոկոսագումարի ամսական հավասարաչափ վճարում/Մայր գումարի ամսական հավասարաչափ վճարում*
Երաշխավորություն	Բանկի կողմից ըստ անհրաժեշտության կարող է պահանջվել Ֆիզիկական անձի/Իրավաբանական անձի երաշխավորություն (Վարկը հաստատող լիազոր մարմնի որոշմամբ)
Հաճախորդի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	• Վարկի տրամադրման պահին գործող վարկերը և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես հսկվող կամ ավելի խիստ դասերով, • Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր /մարված և գործող/ վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը
Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	• Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ, ՀԾՀ, • Ավտոսրահի կողմից տրամադրվող տեղեկանք ձեռքբերվող տրանսպորտային միջոցի նկարագրի և արժեքի վերաբերյալ • Ամուսնության վկայական (եթե ամուսնացած է) կամ հայտարարություն ամուսնացած չլինելու վերաբերյալ • Ամուսնացած լինելու դեպքում ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ • Կանխավճարի վճարումը հավաստող փաստաթուղթ • Ավտոսրահի կողմից տրամադրված փաստաթուղթ տրանսպորտային միջոցի մաքսազերված լինելու վերաբերյալ *Վարկի տրամադրումից առաջ՝* • Վարկառուի անունով տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճեն • Վարկառուի անունով տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը • Ավտոմեքենայի գրավի իրավունքի գրանցման վկայական ՀՔԲ-ից

Հաստատված է՝
Տնօրինության 10.02.2026թ.-ի
Թիվ DEC 12-12 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 12.02.2026թ.-ից:

Վարկի տրամադրման միջնորդավճար	Չի կիրառվում
Վաղաժամկետ մարման տույժ	Չի կիրառվում
Ժամկետանց մայր գումարի տույժ	0,1% օրական
Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0,13% օրական
Վարկավորման համար երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների վճարներ	Պայմանագրերից ծագող իրավունքների (ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման) պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ – 2,000 ՀՀ դրամ Սեփականության իրավունքի գրանցման վճարներ և պետ. տուրքեր - 23,000 ՀՀ դրամ
	Անկախ սույն պայմաններում նշված դրույքաչափերից, երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել

*Վարկի ժամկետի ավարտին վարկառու/գրավատուի տարիքը չի կարող գերազանցել 65 տարեկանը, գերազանցելու դեպքում վարկը տրամադրվելու է համավարկառուի/երաշխավորի ներգրավման պարագայում, վերջիններիս տարիքը վարկի ժամկետի ավարտին ևս պետք է չգերազանցի 65 տարեկանը :

Այլ դրույթներ

Ստորև ներկայացվում է ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքի հաշվարկման մեթոդաբանությունը.

Ճշգրտվող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից).

Բազային տոկոսադրույք

Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ

Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՏՃ= ՏԲ+ՏՀ

Որտեղ՝

Տճ-Ճշգրտվող տոկոսադրույք,

ՏԲ– Բազային տոկոսադրույք,

ՏՀ– Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ:

- Բազային տոկոսադրույքի հիմնական տոկոսադրույք - ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ https://www.cba.am/am

Հաստատված է՝
Տնօրինության 10.02.2026թ.-ի
Թիվ DEC 12-12 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 12.02.2026թ.-ից:

- Բազային տոկոսադրույքի երկրորդային տոկոսադրույք - ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության եկամտաբերություն՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx
- Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ – 10 տոկոսային կետ
  Ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայում/սահմանում - պայմանագրի կնքումից 2 /երկու/ տարի հետո
  Պարբերական վերանայումներ - յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը)
  Ճշգրտվող տոկոսադրույքների կիրառման ամսաթիվ - փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրվան հաջորդող մոտակա մարման ամսաթիվը
  Ճշգրտվող տոկոսադրույքների կլորացում - մաթեմատիկական կլորացման կանոններով՝ տասնորդական տոկոսի ճշգրտությամբ:
- Ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է վերանայման, այն դեպքում երբ հաշվարկված տոկոսադրույքի և գործող տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետից ավելի:
- Տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է 3,5 տոկոսային կետ:

- Օրինակ 1՝ եթե գործող դրամային վարկի տոկոսադրույքը 14.75% է և ենթադրենք վարկի տրամադրումից անցել է 2 տարի և Բազային տոկոսադրույքը այդ պահին 5,75% է: Հաշվարկվող նոր Ճշգրտվող տոկոսադրույքը կստացվի 5,75% + 10% = 15,75%:Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և Բանկի բոլոր մասնաճյուղերում բացառությամբ «Զվարթնոց» մասնաճյուղի:
- Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:
- Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են. Վարկային հայտի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:
- Վարկի մերժման գործոններն են՝ Վարկառուի և/կամ Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին և անբավարար եկամուտները:
- Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում 2 աշխատանքային օրվա ընթացքում և տրամադրում՝ մինչև 5 աշխատանքային օր:

- ԲԱՆԿԸ ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ

Հաստատված է՝
Տնօրինության 10.02.2026թ.-ի
Թիվ DEC 12-12 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 12.02.2026թ.-ից:

ԿԱՆՈՆՆԵՐԸ»ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05-Ի, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՌ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ՖԱՍԹ ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (fastbank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷՋՈՒՄ:
- ՁԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
- ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ՄԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ: ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱՋԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ:
- Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:
- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
- Հաշվին մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկին Վարկի պայմանագրի ուժով վճարման ենթակա

Հաստատված է՝
Տնօրինության 10.02.2026թ.-ի
Թիվ DEC 12-12 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 12.02.2026թ.-ից:

գումարների, այդ թվում՝ միջնորդավճարների, տույժերի, տոկոսների, Վարկի մայր գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի սույն կետով սահմանված մարումն իրականացնել այլ հաջորդականությամբ:

- Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
- ԲԱՆԿԸ ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ»ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05-Ի, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:
- Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ